# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն
համայնք, ՀՀ Արարատի մարզ, գ. Մարմարաշեն,
Հեռ. (091)20-07-59, hakobyan.edik@yandex.com

N 037-164
*31 օգոստոսի 2021թ.*

«ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

պարոն՝ Տ. ՎԻՐԱԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վիրաբյան.

ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի համայնքապետարանի և «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ միջև 2021թ.-ի հուլիսի 6-ին կնքած «Մարմարաշենի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» պայմանագիրը 2021թ.-ի օգոստոսի 31-ից միակողմանի լուծում ենք՝ հիմք ընդունելով

- 2009թ.-ի հուլիսի 2-ի N 777-Ն ՀՀ կառավարության որոշման 5-րդ կետը և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետը,
- ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ա. Շահբազյանի 30.08.2021թ.-ի N ԲՏՄ/11.04/10703-21 գրությունը,
- Մեր կողմից 2021թ.-ի օգոստոսի 10-ի N 037-147 ծանուցումը,
- Կապալային աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող՝ «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ հայտնաբերված թերությունների մասին 09.08.2021թ.-ի No-ՀՏ/ՄՀ/-001/21 գրությունը:

Վերոնշյալ հիմքերը կցվում են:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

№ ՔՏՄ/11.04/10703-21 «30» 08 2021թ.

**ՀՀ Արարատի մարզ, Մարմարաշեն**
**համայնքի ղեկավար**
**Էդվարդ Հակոբյանին**

**Հարգելի պարոն Հակոբյան։**

Ի պատասխան Ձեր 16.08.2021թ․ N 037-149 գրության՝ կապված «ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա» ծրագրով համայնքի փողոցների խճապատման աշխատանքների իրականացման համար քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիայի տրանսպորտային ներդիրը պահանջելու վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը։

Համաձայն 2009 թվականի հուլիսի 2-ի N 777-Ն ՀՀ կառավարության որոշման 5-րդ կետի անձը ցանկացած ոլորտում կարող է զբաղվել շինարարության իրականացման գործունեությամբ, եթե նա ստացել է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8,
էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 66

դեպքերի) գործունեության լիցենզիա և լիցենզիային կից համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ), իսկ համաձայն սույն որոշման 6-րդ կետի լիցենզիաների ներդիրները տրամադրվում են հետևյալ ոլորտների համար՝ բնակելի հասարակական և արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ և կապի:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ գրությամբ նշված աշխատանքների համար անհրաժեշտ է տրանսպորտային ոլորտի համապատասխան ներդիրի առկայություն:

Invalid signature

**Հարգանքով՝**

X

ԱՇՈՏ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Signed by: SHAHBAZYAN ASHOT 3204710157

**ԱՇՈՏ ՇԱՀԲԱԶՅԱՆ**

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8,
էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 66

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն
համայնք, ՀՀ Արարատի մարզ, գ. Մարմարաշեն, Հեռ.
(091)20-07-59, hakobyan.edik@yandex.com

«ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ Տ. ՎԻՐԱԲՅԱՆԻՆ

N 037- 147

*10 օգոստոսի 2021թ.*

Հարգելի պարոն Վիրաբյան

ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի համայնքապետարանի և «Վանդաժի» ՍՊԸ միջև 2021թ.-ի հուլիսի 6-ին կնքած «Մարմարաշենի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» պայմանագրի հիման վրա «Վանդաժի» ՍՊԸ իրականացնում է համայնքի փողոցների խճապատման աշխատանքներ հաստատված նախագծի համապատասխան, սակայն մինչ օրս չեք ներկայացրել քաղաքաշինության ԼԻՑԵՆԶԻԱ համապատասխան /ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ/ ներդիրով: Այդ իսկ պատճառով խնդրում եմ դադարեցնել աշխատանքբերը:

Խնդրում եմ մինչև սույն թվականի օգոստոսի 11-ը ներկայացնել քաղաքաշինության լիցենզիայի բնօրինակը և տրանսպորտային ներդիրի բնօրինակը, հակառակ դեպքում պայմանագիրը կդադարեցվի միակողմանի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
«ГТ-ПРОЕКТ» ООО
«HT-PROJECT» LLC

HT-PROJECT LLC

Հեռ. +374-41-08-00-33
Էլ.հասցե - ht-project@bk.ru

ք. Երևան
No-ՀՏ/ՄՀ/-001/21
09.08.2021թ.

Մարմարաշենի համայնքապետարան
Համայնքի ղեկավար՝
Է. Հակոբյան

Հարգելի պարոն Հակոբյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ- ի և Մարմարաշենի համայնքապետարան միջև «12» Հուլիս 2021թ. կնքվել է N ԱՄՄՀ-ՄԳԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագիր, որի շրջանակներում «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ- ն իրականացնում է ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի փողոցների կոպճապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունները:

- Տեղեկացնում ենք Ձեզ, որ մեր կազմակերպության կողմից շինարարական աշխատանքները կատարելու ընթացքում հայտնաբերել ենք, որ կապալառու կազմակերպությունը «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ- ն վերը նշված պայմանագրի շրջանակներում տեղադրում է գետի կոպիճ՝ մասամբ ջարդված և կլոր քարերի պարունակությամբ, բայց պետք է տեղադրեր Խիճ 20-40 ֆրակցիայի ըստ նախագծի և ծավալաթերթ-նախահաշվի, այդ պատճառով աշխատանքները դադարեցրել ենք 3-երեք օրով, մինչ կապալառու կազմակերպությունը կբերի նոր նյութ որը կհամապատասխանի նախագծի և ծավալաթերթ-նախահաշվին:
- Նաև տեղեկացանք «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ- ից որ նա չունի քաղաքաշինության Լիցենզիայի համապատասխան / ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ/ ներդիրը ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի փողոցների կոպճապատման աշխատանքները իրականացնելու համար:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը վերը նշված խնդիրների կարգավորման համար:

Հարգանքներով՝ «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն / / Ա.Խալաթյան

«ՀՏ-ՊՐՈԵԿՏ» «ГТ-ПРОЕКТ» "HT-PROJECT" 00229138

HT-PROJECT LLC